ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ապրիլի 2015թ. **N___-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ՍԱՍՈՒՆ-ՏԱՐՈՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N270-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Աջափնյակ Էստոնական 12/3 հասցեում գտնվող 331.2 քմ շինությունը և 773 քմ հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 27.07.2012թ. հ. 27072012-01-1146 վկայական) անհատույց օգտագործման իրավունքով 10 (տաս) տարի ժամկետով տրամադրել «Սասուն-Տարոն» հայրենակցական միություն հասարակական կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՍԱՍՈՒՆ-ՏԱՐՈՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Սասուն-Տարոն» հայրենակցական միություն հասարակական կազմակերպությունը դիմել է Երևանի քաղաքապետին՝ կազմակերպության կողմից զբաղեցրած Աջափնյակ Էստոնական 12/3 հասցեում գտնվող շինությունը և դրանով ծանրաբեռնված և սպասարկման համար անհրաժեշտ հողամասն անհատույց օգտագործման իրավունքով միությանը տրամադրելու խնդրանքով:

«Սասուն-Տարոն» հայրենակցական միություն հասարակական կազմակերպությունը լայնածավալ հասարակական, մշակութային, կրթական, սոցիալական, ռազմահայրենասիրական և գրահրատարակչական գործունեություն է իրականացնում Հայաստանի Հանրապետությունում և սփյուռքում: Միությունը համախմբում է Հայաստանում, սփյուռքում և պատմական հայրենիքում (հատկապես Սասունում և Մուշում) բնակվող տարոնցիներին, և նրանց ողջ մարդկային, կրթական, սոցիալ-մշակութային և ազգագրական ներուժը ծառայեցնում է Հայաստանի Հանրապետության և Արցախի հզորացման ու ազգային ծրագրերի իրագործմանը:

«Սասուն-Տարոն» հայրենակցական միություն հասարակական կազմակերպությունը հիմնադրման օրվանից մեծ դերակատարում ունի Հայաստանի և Արցախի սահմանների պաշտպանության և սերունդների հայրենասիրական դաստիարակության գործում: Միությունը երկար տարիներ իր գործունեությունը ծավալել է Էստոնական 12/3 հասցեում՝ կատարելով բոլոր անհրաժեշտ ներդրումները կապված տարածքի պահպանման, վերանորոգման և բարեկարգման հետ:

Աջափնյակ Էստոնական 12/3 հասցեում գտնվող շինությունը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 27.07.2012թ. հ.27072012-01-1146 վկայական):

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N270-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝ նախապատրաստվել է ««Սասուն-Տարոն» հայրենակցական միություն հասարակական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՍԱՍՈՒՆ-ՏԱՐՈՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու ««Սասուն-Տարոն» հայրենակցական միություն հասարակական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՍԱՍՈՒՆ-ՏԱՐՈՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու ««Սասուն-Տարոն» հայրենակցական միություն հասարակական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ